

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիրք 10 բուրջ, կէս տարեկանը 6 բուրջ:
Առանձին համարները 5 կողմերով:
Թիֆլիսում գրգում են միմիայն Խմբագրության մէջ:
Օտարապարտացիք դիմում են ուղղակի
Կազմակերպութեան «Մուսակ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Քաղկի կիրակի եւ տոն օրերից):
Յայտարարութիւն ընդունում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանիսր թուին 2 կողմից:

Մ Շ Ա Կ

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Ե ԳՐՎԵԼ

Կ Ե Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թվի, մինչև յուլիսի 1-ը 1882 թվի: Բաժանորդութեան գինը 6 բուրջ է: Գրվելու համար պետք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետևեալ հասցեով. Կազմակերպութեան «Մուսակ»:

ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆ

Ներսէս պատրիարքի հրատարակած յետ առնելով:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրերը:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անդրապատ: Հայք եւ յայնք: Նամակ Թիւրքիայից:—ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ս Պետերբուրգի նաճաղի ուսուցիչների ժողովի անիթով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներսէս պատրիարքի հրատարակած յետ առնելով:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրերը:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անդրապատ: Հայք եւ յայնք: Նամակ Թիւրքիայից:—ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ս Պետերբուրգի նաճաղի ուսուցիչների ժողովի անիթով:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆԱԶԱՆԳԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Ներկայ տարւոյս Ջորժիէի արձակուրդներին տեղոյս Ալազիմիտեան կոչված քաղաքային զպրոցի ընդարձակ դահլիճում կայացաւ Ս. Պետերբուրգի նաճաղի գիւղական ուսուցիչների և ուսուցչուհիների ժողով: Ժողովը նպատակն էր ցոյց տալ ուսուցչուհիներին և ուսուցչուհիներին այն բոլոր դասական և ուսումնական ձեռնարկները և գործիքները, որոնք պատրաստած էին ուղղակի Սոսիալի գիւղաբնակատար-արդիւնաբերական հանդիսին ու մի և նոյն ժամանակ, օգտվելով ուսուցչուհիների և ուսուցչուհիների ցուցմունքներով ու նկատողութիւններով, լաւացնել ու փոփոխել դասական աւարտներին ընտրողութիւնը, որքան այդ կարելի կը լինի: Բացի դրանից, այդ ժողովում զարթեցան նոյնպէս և զանազան հարցեր, այդպէս օրինակ շարժական թանգարանի (подвижной музей), անգրագիտութեան առաջն առնելու ու ժողովրդական դրողութեան արձեւանները մոցնելու մասին: Թէ որքան այդ ժողովը հասաւ իր նպատակին—այդ կարելի է նկատել յօղուածին վերջում, իսկ այժմ աւելորդ չենք համարում Պետերբուրգի նաճաղի ուսուցչական ժողովների սկզբնաւորութեան մասին ասել մի քանի խօսք: Այդ ժողովների ին-

տեսակ ծանր, նշանաւոր և վճռողական բուսակում Ներսէս պատրիարքը յետ քաջվեր իր պաշտօնից, որ նա այդքան պատուով տարաւ երկար տարիներին ընթացում: Աւելորդ է քննել այժմ թէ պատրիարքի ժամանակաւոր հրատարականը ինչ պատճառներից առաջ եկաւ. արդեօք ազգային ժողովի կնտրիզաներն էին ստիպել Ներսէսին իր հրատարականը տալու, թէ այդ հրատարականը մի տեսակ բողոք էր թիւրքաց կառավարութեան դէմ, որ վերջին ժամանակները աւելի և աւելի յամառութեամբ սկսեց անտես առնել իր հայտակ հայերի իրաւացի պահանջները, զիմամբ մոռացութեան էր տալիս Հայաստանի վերանորոգութիւնների խնդիրը և արուեստական կերպով յարուցանում էր քիւրդերի շարժումը Հայոց ինքնավարութեան հարցը կատարելագոյն խնդիրը համար: Գոյց է երկու պատճառներն էլ նշանակութիւն ունենին, բայց մեր կարծիքով վերջինը աւելի մեծ ազդեցութիւն ունեցաւ պատրիարքի վճռողական քայլի վրա: Եւ ճշմարտ, վերջին ժամանակները երեք եւրօպական պետութիւններից, որոնք ամենից շատ էին հոգում Բելրիին դաշնագրի 61-որդ յօդուածի անյայտ իրագործման մասին, Ռուսաստանը և Անգլիան Ըրբազոված էին իրանց ներքին գործերով, իսկ Ֆրանսիան, Տուրիի պատերազմից առաջ ոչ թէ միայն չէր գրեք էր բռնել Թիւրքիայի վերաբերութեամբ, բայց մինչև անգամ սկսեց թշնամական կերպով վերաբերվել դէպի յուսանց և չէր օգործական խնդիրները, այդպիսով Թիւրքիայի կողմը պահելով: Այժմ Անգլիան և Ռուսաստանը կրկին սկսում են ուշադրութիւն դարձնել

ցիտովն ու պատիւ պատկանում է Բոզդուստիւնի ուսուցչուհի Նաճաղի ժողովրդական զպրոցների զիրեկտորին. ուսուցչական ժողովների ծագել են զպրոցական ձեռնարկների և գործիքների կարկնելու հենց հիմնարկութեան օրից: Այդ կարգից բաց է արած այն նպատակով, որ ուսուցչուհիները և ուսուցչուհիները միջոց ունենան օգտվել նրա մէջ ժողոված զբերելից ու զպրոցական գործիքներից իրանց դասախօսութեան ժամանակ: Բայց զիրեկտորի և ինսպեկտորների գիւղական զպրոցների այցելութիւնները ու ժամանակ նկատելի է, որ ուսուցչուհիներից շատերը չեն կարողանում օգտվել զպրոցական գործիքներից իրանց դասախօսութեան ժամանակ, ուստի և ծագել է միտք ժողովել ուսուցչուհիներին և ուսուցչուհիներին, ցոյց տալ նրանց ընթացումներն և օրինակելի դասերի միջոցով զպրոցական դասնական գործիքների գործարարութիւնը ու նշանակութիւնը: Բայց, ինչպէս այդ փորձը ցոյց տուաւ, ժողովները չէին կարող բաւականանալ միայն այդ նպատակով.—կարելի էր ստիպված նրանք սկսեցին կարթեցնել այնպիսի հարցեր, որոնք արդէն չէին վերաբերում զպրոցական գործիքների բացատրութեանը, բայց որոնք զարթել էին ինքն ըստ ինքեան—զպրոցական կեանքի պրակտիկայով—և հետևապէս դրանք չէին էլ կարող մնալ անվիճու. կամայ-կամայ զարթեցան այնպիսի անգամ հարցեր, որոնք ունեն իսկ տեսական բնաւորութիւն, այդպէս օրինակ.—ուսուցչի ազդեցութիւնը գիւղական շրջանի վրա, կամ թէ—ւարձեւորների դասաւորութեան մասին ժողովրդական զպրոցներում: Այն: Այսպիսով ժողովները կամայ-կամայ կորցնէին իրանց սկզբնական բնաւորութիւնը, նոյն-

թիւրքաց Հայաստանի վերանորոգութիւնների խնդիր վրա, իսկ Ֆրանսիայի բարեկամական յարաբերութիւնները Բ. Գրան հետ սաստիկ խանգարվեցան: Ֆրանսիան որ հաւատացած էր թէ կատարելագոյն հաստատու է իր տիրապետութիւնը Ալժիրիայում, այժմ, երբ Ալժիրիայում ապստամբութիւն ծագեց, համոզուած է որ մահմետական աշխարհը երբեք չի կնթարկվի լուսաւորութեան ոյժին և քաղաքակրթութեան ազդեցութեանը, քանի որ Թիւրքիան գոյութիւն կունենայ: Ֆրանսիան այժմ փոշմանված կը լինի Թիւրքիային իր տուած պաշտպանութեան մասին յուսանց և չէր օգործական հարցերի վճելու ժամանակ: Թող Ֆրանսիան համոզվի այժմ, որ ամբողջ աշխարհի մահմետականները միշտ խոստարա կը լինեն ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան դէմ, քանի որ կիմանան թէ Թիւրքիան գոյութիւն ունի, թէ Ստամբուլի մէջ նստած է Մահմետի յաջորդը, ամբողջ մահմետական աշխարհի մեծ խալիֆը, որ իր ձեռքի տակ անյաղութիւնը գործերն ունելով միշտ սպառնալի կարող է լինել գեաւուրների աշխարհի համար: Մահմետականների բոլոր խոսովութիւնները, նրանց բոլոր ապստամբութիւնները միշտ կատարվում են Ստամբուլի յոյսով: Թող այդ բանի մէջ համոզվի Ֆրանսիան և զյջայ Թիւրքիային իր ցոյց տուած անգրգոյ բարեկամութեան մասին, որի համար նա օրինաւոր կերպով պատժվեց, ստիպված լինելով ճնշել գործերի ոյժով Ալժիրիայում ծագած ապստամբութիւնը: Բոլոր վերոյիշեալ իրողութիւններից կարելի է եզրակացնել որ ներկայ րօպէն շատ աջող է Հայոց խնդրի լուծելուն: Գլխաւոր

պէս և ընդլայնվեց պարապմանը շրջանը. իսկ ժողովների կազմակերպութիւնը մնաց մի և նոյնը—և նրանք չեն կարողանում համեմ իրանց նոր նպատակին և հենց առաջվան էլ շատ թոյլ է իրագործվում: Բայց որպէս զի Պետերբուրգի նաճաղի ուսուցչական ժողովները աւելի արդիւնաւոր լինէին, նրանց կազմակերպութիւնը անկասկած պահանջում է բաւական փոփոխութիւններ: Անա այն բոլոր նկատողութիւնները, որ ունենք ասելու եղած ժողովի կազմութեան առիթով: Նախ շատ քիչ ժամանակ է որովում ինքիքներնունքին ժողովներում կարգաւոր կամ իտուելու այն հարցերի մշակութեան համար, որոնք պիտի ենթարկվին ժողովի անգամաց քննութեանը: Երկրորդ այն տեսակ հարցերի ընտրութիւնը, որոնք ժողովի քննութեանը պիտի ենթարկվին, լինում է սահասարակ առանց ժողովրդական ուսուցչուհիների գիտութեան և մինչև անգամ հարցերի մշակումը ուղղակի յանձնվում է ուսուցչուհիներից մի քանիսին: Այն ինչ թեմաները ընտրութիւնը ժողովներից (գիւղական) ուսուցչուհիների կողմից պիտի բաւարովին լինի ազատ, լրացնելով նրան այն հարցերով, որոնց մշակումը ու քննութիւնը կարելի են համարում ժողովի ընտրութիւնը ժողովներից: Այն ինչ թեմաները ստաշմանը ու փորձաւոր անձինքը: Բայց որովհետեւ յարուցած հարցերը բաւականի ուշադրութեան արժանի հարցեր էին ու նրանց մշակումը առաջարկած է եղել այնպիսի անձանց, որոնք շատ մօտիկ ծանօթ չէին այդ հարցերի հետ և այն էլ յանձնվել է մի քանի օր առաջ, մինչև ժողովի բացվելը, ուստի և շատ անգամ նրանց մշակումը եղել է շատ թոյլ ու սահմանափակվել է մեծ մասով ընդհանուր նկատողութիւններով: և չէր էլ կարելի սպասել կատարեալ մշակութիւն

պետութիւնների բարեկամական յարաբերութիւնները դէպի Թիւրքիան խանգարված են և յուսանց ու չէր օգործական խնդիրները յետոյ հերթը հասաւ և Հայոց խնդիրը: Այդ պատճառով ուրախալի է որ Ներսէսը կրկին կը լինի քաղաքական ներկայացուցիչ Թիւրքաց հայերի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեզ պատուում են թէ այն լուրը որ իբր թէ դերասան պ. Աղամեան պայմանաւորվել է թատրոնական կոմիտեի հետ անցեալ տարւոյ պայմաններով սխալ է: Մեզ հաստատագոյն հաւատացում են որ այս տարի Աղամեանը 200 բուրջ ամսական և առաջին բենեֆիս պէտք է ստանայ, իսկ անցեալ տարի ստանում էր 150 բուրջ և վերջին բենեֆիս: Աղամեանը կապել է նոր պայմանը յուլիսի 4-ին, իսկ պայմանագրի մէջ գրված է յունիս 1881 թ.: Այն էլ պէտք է ասել որ Աղամեանի հին պայմանը կոմիտեար նոյնպէս պահում է, ցոյց տալու համար կ. Պօլսի նոր դերասաններին որ Աղամեանի ուժերը չէ աւելացել, որպէս զի նրանք էլ աւելի չը պահանջեն:

ՄՅՂԳՈՒՅՑ մեզ գրում են: «Հաս ժամանակ չէ այստեղ վախճանվեցաւ Մոսկուայի համալսարանի բժշկական բանի ուսանող Ռաջատուր Լիսիցեան: Հանգուցեալի ծնողները յանձն են առել իրանց որդու հոգու համար իւրաքանչիւր տարի նոսրել 25 բուրջ յօղուտ Միացեալ Րուսիայի կրթութեան: Թող օրինակ առնեն Մոզգոյի ժրնողները:»

ՇՈՒՆՈՒՑ մեզ գրում են որ այս տարի Գ. ա.

այն պարտններից, որոնք շատ կարճ ժամանակ են պարապել հարցի քննադատութիւնով: Եթէ որ թեմաների ընտրութիւնը ազատ լինէր, այն ժամանակ մշակած կը լինէին հարցերը աւելի բազմակողմանի այնպիսի անձինք, որոնք աւելի մօտ ծանօթ են զարթեցրած հարցերի հետ ու բարեխղճաբար ուսումնասիրած նրանց գրականութիւնը: Երբորդ ժողովների առաջուպ կազմակերպութեան խիստ պահանջողութիւնը առաջ է բերել և մի ուրիշ անյարմարութիւն.—ուսուցչուհիներին մի մասը ցոյց է տալիս իրան իր փորձաւոր մանկավարժներ, իսկ միւս մասը—անիտորձ աշակերտներ: Հէնց այդ պատճառով այդ երկու խմբերի մէջ ծագել են մի տեսակ թշնամական յարաբերութիւններ: Գործերի այդ տեսակ ընթացքը առիթ է տուել մի քանի անձանց սաստիկ բարձր գնահատել իրանց աշխատանքը, դերը է նոյս ընդունել մի տեսակ ինքնայոյս դրողութիւն, մի տեսակ արհամարհանք դէպի իրանց միւս ընկերակիցները: Կարելի է ասել, որ մինչև անգամ գիւղական և քաղաքային ուսուցչուհիների խառն ժողովը այնքան կանոնաւոր չէ կարելի համարել, ըստ որում դրանց և միւսների ինտերեսները բաւականի տարբեր են: Բացի դրանից, ժողովներում քննութեան ենթարկվեցան այնպիսի հարցեր, որտեղ քաղաքային զպրոցների ուսուցչուհիները կարող են շատ քիչ օգուտ բերել, որովհետեւ նրանցից շատերը ծանօթ չեն գիւղական կեանքի պայմաններին հետ, այն ուրիշ և ժողովրդական (գիւղական) զպրոցների դրողութեան հետ: Այդ դէպքում աւելի յարմար է գիւղական ու քաղաքային ուսուցչուհիների համար զատ ժողովներ կազմել: Մեզ մնում է ցոյց տալ այստեղ միայն այն

բարգիւծ հացը առատ է և մեծ գումարով ցորեն գնողներն էլ կան։

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են։ «Մինչև որ հայոց դպրոցը թշուառ դրութեան մէջ է և երեւի չուտով կը փակվի, քաղաքում բացվելու է բնական դպրոցը երեք դասարանով։ Բնական աշակերտներ կան, որոնք անհամբեր սպասում են նրա բացվելուն։ Բացի սրանից բացված է քաղաքային դպրոցի կից մի արհեստական դասարան, որի համար կառավարութիւնը տալիս է 500 ռ. տարեկան, իսկ անտառապետը ձրի ատարձ է տալիս։ Արդէն ստորագրութիւն է բացված և ներկայացուցիչներ են տրվում յօդուս այդ դասարանի։»

ԵՐԵՎԱՆԻՅ մեզ գրում են։ «Գաւառական բոլոր հայոց դպրոցները մի չորս հինգ տարուց յետոյ փոքր առ փոքր կը փակվեն, որովհետեւ էլ միմիայն մեր գաւառական դպրոցները բոլոր եկամուտները փոքր առ փոքր առնում է և կենտրոնացնում է վանքի մէջ։ Այդպիսով էլ միմիայն նպատակն է որ քիչ ժամանակից յետոյ Անդրկովկասի մէջ ոչ մի հայոց դպրոց չը լինի բացի էջմիածնի ձեռնարանից։ Իսկ մեր հայոց երբեք տասարութիւնը ստիպված կը լինի ուսում առնել միմիայն պետական դպրոցներում, երբ պահանջները, էջմիածնի շնորհով, բոլորն էլ կը փակվեն։ Արդէն Երևանի և Եւզուր գեղաւանները սկսում են ենթարկուել այդ վիճակին, հերթը կը գայ և այլ դպրոցներին և Երեստահան դպրոցին։»

Հինգշաբթի, յուլիսի 16-ին Արծրունու թատրոնում մասնակցութեամբ Ա. Յակոբեանի յօդուս պ. Աղայեանի կը ներկայացնուի «Արեւ և նախապաշարմունք» կտիւ 3 արար. թարգ. Ա. Բարսեղեանի և գաւառի։ Վկիզն է 8 1/2 ժամին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ

Արդարեւ մէջ հրատարակված է համայնքների ժողովի անդամ յայտնի Բրեդելյի և Գլադստոնի գրագրութիւնը առաջին յայտնութեան առիթով, որ նա մտադիր է իր տեղը բռնել համայնքների ժողովի մէջ և մասնակցել նրա նիստերին։ Եթէ Բրեդելյո կը գայ իր կուսակիցների հետ, վերջիններին չեն թոյլ տայ մտնել պարա-

մենտի բակը, իսկ Բրեդելյոն կը թողնեն մտնել պարլամենտի անցքերի մէջ, իսկ գահիճը ներս չեն թողնի։ Պարլամենտական ուստիկաններին օգնելու համար պոլիցիակներն են հրաւիրված։

Պարլամենտի անդամներից շատերը չափազանց անբաւական են, որ վինդորփի պարկի վերակացու իշխան Երիտախան վերջին զորախաղի ժամանակ պարլամենտի անդամների համար առանձին սեղեր չը պատրաստեց։ Համայնքների ժողովի անդամներից մի քանիսը ժողովի մէջ այդ առիթով յարձակվեցին ոչ թէ միայն կուսավարութեան, այլ և թագաւորական տան անդամների վրա։

Մայո կամուրջի մէջ երկու կալուածատէրերի վրա հրացան արձակեցին։ Երկուսն էլ վիրաւորված են՝ մէկը թեթեւ, իսկ միւսը մահացու կերպով։ Յանցաւորները կալուածաւորված են։

ՀԱՅՔ ԵՒ ՅՈՅՆՔ

Մայրաքաղաքի Յոյն հասարակութեան գլխաւոր լրագիրը՝ «Ն Ե Ռ Ղ Ո Ս» որ ամբողջ թիւերէն մամուլն ալ գլխաւոր գարեդերէն մին է, Պատ. Տ. Տիմիթրիու Չորսքիտի վերջին աշխատութեան վրայ, զոր անցեալ օր ծանուցիք, հետեւեալ խորհրդածութիւնն հրատարակած է, յորում համարակից գիտողութիւններ կան հայոց և Յունաց յարաբերութիւններուն վրայ։

Պ. Տ. Չորսքիտի ըստ ամենայնի կարեւոր և նոր գործն, որոյ վրայ մեր պաշտօնակիցը նախ քան զմեզ գրեցին, մեծ պատիւ կը բերէ թէ՛ աշխատասիրողին և թէ՛ մեր համագրի հասարակութեան, որ ուշի ուշով ընթերցողով զայն, կրնայ այսուհետև ունակ ընել աշխատութեան ծագած նախապաշարմունքն, որք՝ որոմանց նման խառնուելով հին ժամանակաց աստուածաբանական աւելորդ անբարոյութեանց, հերձուածներ յառաջ բերին և կըբայր ազդեր բաժանեցին. ազդեր, որք նախ քան զՔրիստոնէութիւն մտքառած չէին բնաւ ընդ միմեանս, և որք՝ կը թուէ թէ՛ սահմանեալ էին սիրոյ Աւետարանին գալուստէն

յետոյ մարտնչիլ իրարու հետ այնպիսի գաղափարաց համար, որք դարուց ի դարս անմեկնելի մնացած են և պիտի մնան յաւիտեան։

«Այսօր՝ ամենքս կը զարմանամք՝ Հայք և այլ Աւելոքաւորք, թէ՛ ո՞րպիսի այլանդակ պատճառաւ չեմք միացեալ, քանի որ միջնորմ մը չենք սեներ ընդ մէջ, իբր ո՞ր և է պատճառ, և եղածն ալ փառած և ոչինչ իսկ է։ Մեր Հայ եղբարք կը կարծուին, ցարդ իբր դաւանողք զմի բնուած թիւն, սակայն այս հակառակամարտ վիճին մէջ այնքան նրբութիւն կայ, որ ցարդ իսկ ոչ աստուածաբանական հանձարն և ոչ այլ զբարանութիւնք կարող չեղան բացատրել այս նրբութեան մեկնիչ սահմաններն, և բաժանումը՝ թէ՛ և կայ՝ սակայն բոլորովին անհասկանալի է անոնց, որք իբրք կը քննեն պատմական, գործնական, դրական և աւետարանական օգտակար տեսակետով մը։

«Հայկական Եկեղեցւոյ Ս. Մկրտութեան կանոնաց ընթերցումն ուրախացուց միանգամայն և վշտացուց զմեզ. մի կողմանէ, մինչև յարտասուս փղձկեցանք այս արարողութեան վսեմութեան և մերինին հետ նորա ճիշդ նոյնութեան վրայ, և միւս կողմէ, գարձեալ մինչև յարտասուս վշտացանք, որ հին դարու մի անմտութիւնը բաժանեց այսպէս զմեզ այն ազգէն, որոյ անունն ու պատմութիւնը բերկրութեամբ կը լինուինունք և իբրև պարտք կուսնինք՝ Քրիստոսէն առջի մեր անմահ հարց մատենից մէջ։

«Հայոց Ս. Կաթողիկոսին ընդ Բիւզանդեան կայսեր գրակցութիւնը, զոր այս առաջին անգամ մեր լեզուն թարգմանուած կը տեսնենք և Հելլենական այնքան բառից կիրաւութիւնն Հայոց Եկեղեցւոյն մէջ՝ այնպէս սերտիւ կը զօղեն զմեզ մեր Հայ եղբարք հետ, որ միութեան ժամուն սպասող ոչ ոք կարէ սպասել այլ ևս (զի արդէն իսկ է այդ ժամանակը)։ Վասն զի Հայք չեն այն ազգերէ, որք կրնան կարծել թէ՛ երջանիկ են պատմութիւն չունենալով. ընդհակառակն՝ երջանիկ են նոքա, զի ունին պատմութիւն։ Երանի՛ թէ՛ յերօպոլիս և կայսերական պատկառելի կառավարու-

թեան կողմէ մտադրեալ բարենորոգումներն և ընդհանուր Արևելից խաղաղութիւնն յետոյ, պաշտօնապէս հնչելը սերտ եղբայրակցութեան ժամն, որոյ գալուստն յաջողապէս կաւետեն այնպիսի բանասիրական և պատմական երկեր, որպիսիք են Պ. Տ. Չորսքիտի «Եւզուսեաց երկասիրութիւնք։»

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿՈՒՑԻՅ

Կ. Պոլիս, 3 յուլիսի

Այս անգամ էլ մի քանի խօսք մեր այլաբան համարիւնների վրա։ Հեռագիրներից գիտեք արդէն, որ Հասունի տեղը ընտրվելու պատրաստեցիք և կաթողիկոս Աղայեանը, հայ-կաթողիկոսներ այս ընտրութեան մասին կարելի է միայն յիշել առածը՝ промѣнять кукушку на ястреба. Սա թէպէտ ազգաւ դուռ հայ է, բայց հողով և համոզմունքներով աւելի մոլեռանդ, աւելի եզուրիտ, աւելի ազդեալեաց քան թէ քաղաքացի Հասուն կարդինալը։ Հերթէ քերթ միայն հետեւեալ հանգիստը կերպով արտասանած խօսքերը, ցոյց տալու համար թէ՛ ինչ արարած է սոսմկահայ կաթողիկոսի նոր առաջնորդը. հայոց ազգը միշտ եղել է կրօնական ազգ (?!), մասնաւոր նա պիտի մնայ այժմ և այսուհետև իստիւ կրօնական, վասնորոյ ևս ոչ կարող էմ ինքս հասկանալ և ոչ ձեզ հասկանալ թէ՛ ինչ ատել է հայկական ինքնօրէն վարչութիւն և այլն։ Ան ինչպիսի ճառով (ի հարկէ թիւրքերէն լեզուով) պատուելի իր ստորագրեալների ժողովը նորընտիր հայ եղբարեկաթողիկոսը։ Արեւմտ ստրանից յետ քսան տարի չանցած կը տեսնենք, որ Կ. Պոլիս յիսուն հազար հայ կաթողիկոսներ կը դադարեն իրանց հայ կոչել, ասիւլով լատին, արաբ, եզիպտացի, բայց ոչ հայ։ Ի՞նչ ոչխարային յատկութիւն ունեն բանականութիւն ունեցող արարածները ևս. մի հաստ անպիտան և կեղտոտ եզուրիտ կարող է պղծել ամբողջ մի հոտ։

Ի՞նչ կառեք արդեօք եթէ ցոյց տամ, որ այսպիսի մի եզուրիտ, փոխանակ ըստ արժանոյն գնահատվելու այստեղի հայ մասունից, նա միայն վառ և ոգևորված ներբողներ է ստանում. ինչ է պատճառը—Աղայեանի տուած փարան, փարպով կարող էք առնել այստեղ սրճափ քանակութիւն ուղեք խիղճ, պատիւ, համոզմունք, համակրութիւն և այլն։ Այսպիսի մասունով հընարին է արդեօք ազգային ժողովին կամ որ և է ընկերութեան մի քաղ յառաջադիւնութիւն ա-

պատճառներից մէկը, որ ունեցել է քիչ թէ շատ նշանակութիւն առաջուայ ժողովների տուած աննշան օգուտները վրա, այդ պէս է, որ ժողովների պարագամանց ցուցակը ուղարկվելիս են եղել զիւղական ուսուցիչներին շատ ուշ և հետեւապէս նրանք նոյնպէս շատ քիչ ժամանակամիջոց են ունեցել նախապէս մտածելու առաջարկած հարցերի վրա. իսկ կարգալ ինչ և ինչ նրա պատրաստվելու համար—բոլորովին անկարելի է։

Չարթուցած հարցերի քննադատութեան համար պատրաստականութիւն չունենալու պատճառաւ, վճեմը ժողովներում եղան առանց որ և ինչ սխառեմայի, անզգար անցնելով մի հարցից դէպի միւսը. այդ պատճառով և ժողովի անդամները չեն կրնում որոշուիլ հետեւանքի. իսկ նկատուողութիւնների եղան շատ քիչ, զարթուցած հարցերի քննութեան համար շատ քիչ ժամանակ էր որոշված։ Յայտնելով այդ նկատուողութիւնները ժողովների կազմակերպութեան վերաբերմամբ, դառնում այժմ ուսուցչական ժողովի պարագամանց ընթացքին։

Յունիարի 2-ին, ժողովրդական դպրոցների իրեկտորի մի նամակաւ ձառից յետոյ, որով նա ցոյց տուաւ ներկայ ժողովի նպատակը, Պետերբուրգի քաղաքային դպրոցների ուսուցիչներից մէկը կարգաց իր ընթերցանութեան վրայ, որովք ձեռնարկները և գործիքները մասին, որոնք գործ են անվում Ուշինսկու Родное слово-ի ա. տարին անցնելու ժամանակ։ Բէֆերենտը իր զեկուցման մէջ նախ և առաջ յայտնեց այն միտքը թէ՛ գրագիրութեան որ եղանակներն են աւելի գործածական և զբանցից որ կարելի է աւելի յարմարագոյն համարել։ Բէֆերենտի կար-

ծիքով աւելի յարմարն է սեռետիքական եղանակը. այդ եղանակով յորինած են արդէն շատ դասագրքեր և դրանց ընտրութեան մէջ ուսուցիչը բոլորովին ազատ է։ Բէֆերենտը կանգ առաւ միայն երեք դասագրքերի վրա—Պատըստնի, Ուշինսկու ու Բունակովի։ Այդ դասագրքերից նա աւելի յարմարագոյնն է համարում Ուշինսկու դասագրքը։ Պատըստնի դասագրքը նրա կարծիքով չէ կարելի բոլորովին բաւականացուցիլ համարել, որովհետև դասատուութեան ժամանակ ունկարելի է պատշաճաւոր ընտրողութիւններ անել դասական գործիքների մէջ. իսկ Բունակովի դասագրքը բոլորովին նման է Ուշինսկու դասագրքին։ Բացի դրանից, Բունակովի թոյլ կողմը կայանում է նրա մէջ, որ նախ և առաջ երկխոյն նա ծանօթացնում է միայն 12 տառերի հետ ու վարժութեան համար այնպիսի բառեր է հարուստ, որոնք անմտաչելի են երկխոյն հասկացողութեանը ու մի և նոյն ժամանակ հարած բառերի մէջ չը կայ ներքին կապ։ Այնու ամենայնիւ, նա մի և նոյն ժամանակ այդ բոլոր թերութեանց հետ Բունակովի դասագրքի մէջ գտնում է այնպիսի արժանաւորութիւններ, որոնցից որովք է Ուշինսկու դասագրքը, այն է առաջնում խօսակցութիւնների լինում են առարկայական—առարկաների միջոցով, իսկ երկրորդում—պատկերների, նկարների միջոցով։ Բունակովի դասագրքի անյարմարութիւններից մէկն էլ այն է, որ նրա դասագրքը վերջացնելուց յետոյ ստիպված ևս լինում անցնել Ուշինսկու «Родное слово» դասագրքին։ Բէֆերենտը իր զեկուցումը եզրափակեց նրանով թէ՛ գրագիրութեան պիտի անցնել Ուշինսկու գրքով։ Կանգ առնելով Ուշինսկու դասագրքի վրա, նա

սկսեց թուել այն գործիքները ու ձեռնարկները, որոնք անշուշտ կարևոր են «Родное слово» ա. տարին անցնելու ժամանակ։ Բէֆերենտի կարծիքով բոլոր մինչև այժմ հրատարակած ձեռնարկներից ոչ մէկը չէ կարող կատարեալ կերպով բաւականութեան տալ Ուշինսկու պրոգրամային։ Ձեռնարկների ու գործիքների մի յարմար կօլլեկցիա կազմելու համար ստիպված են եղել շատ զգուշ ընտրողութիւններ անել նրանց գաւառական հրատարակութիւններից և մինչև անգամ մասամբ նորից կազմել։ Այն ժողովածուի մէջ, որ պատրաստած է եղել Մոսկուայի հանդիսի համար, մտել են Չամբայովսկու, Գաշեայի, Վիլիէի, Երեյարի, Լէյտիանի, Ֆիլետի և Волебно-Экономическое общество-ի հրատարակած նկարների։ Մի և նոյն ժամանակ Բէֆերենտը նկատեց թէ՛ նկատողական դասատուութեան ժամանակ աւելի լաւ և է յարմար նկարներ գործ անել, քան թէ առարկաներ։

Գորանից յետոյ կարգաւիցեալ և մի ընթերցան այն գործիքների մասին, որոնք գործ են անվում Ուշինսկու «Родное слово» բ. տարին անցնելու ժամանակ։ Նախ և առաջ Բէֆերենտը յայտնեց այն միտքը թէ՛ հարկաւոր է արդեօք Ուշինսկու գրքից զատել այն բոլոր յօդուածները, որոնք վերաբերում են աշխարհագրութեան (міровѣдѣніе) և դրանց անցնել բոլորովին առանձին, որպէս զի դրանցով կարելի լինի աշակերտաց հարգելի ընդհանրական գիտութիւններ, թէ՛ անցնել դրանց բացատրական ընթերցանութեան հետ միասին։ Բէֆերենտի կարծիքով այդ յօդուածները պիտի կարգաւիցեն միասին։ Այնուհետև նա անցաւ այն գործիքների քննադատութեանը, որոնք գործ են անվում Родное слово-ի բ. տարին անց-

նելու ժամանակ։ Նրա կարծիքով իբրև գործիքներ Родное слово-ի բ. տարուայ համար—կարող են համարվել նկարներ, բայց մի քանի դէպքերում իբրև գործիքներ կարող են համարվել նոյն իսկ առաջնարկներ, նա մասնաւոր այն յօդուածների ընթերցանութեան ժամանակ, որտեղ բացատրված է որ և ինչ մի արտաբերութիւն, որի նախի համար, «какъ рудаща выросла въ полѣ»։ Այնուհետև Բէֆերենտը սկսեց խմբագրել Ուշինսկու գրքի բոլոր յօդուածները, բացառելով դրանց իւրաքանչիւր խումբի ընդհանուր միտքը և ցոյց տուաւ թէ՛ աշխարհագրութեանից որպիսի ստեղծութիւններ կարելի է հարգելի այդ յօդուածներով, Վերջապէս նա կարողաց մի ցուցակ այն գրքերի, որոնց կարելի է տալ աշակերտաց կարգաւոր ալիք տարում և որոնցից կարող է օգտվել ինքն ուսուցիչը։

Մենք չը պիտի մի առ մի թուենք այստեղ այն բոլոր գործիքները, որոնց առաջարկում էին երկու Բէֆերենտները, որովհետև բոլորը առանց բացատրութեան չէ կարելի համարել բաւականացուցիչ ու մինչև անգամ հարկաւոր, իսկ երրորդ այն պատճառով, որ այդ տեսակ ժողովածու իր ստատիկ ծանոթութեան պատճառով անտառչելի է մի ժամանակ ժողովրդական դպրոցի (այն բոլոր ձեռնարկները, գործիքները, որոնք ժողովված են Родное слово-ի ա. և բ. տարիների ընթերցանութեան համար, 400 բուրուց աւելի փող արժէ)։ Իսկ ինչ վերաբերում է դպրոցական գործիքների դասաւորութեանը, ցաւակցաբար պիտի ասել, որ ընդհանրական հանդէս բացանողները չը կարողացան դրանց այնպէս ժողովել ու կարգի բերել, որ կարելի լինէր տալ մի պարզ հասկացողութիւն minimum-ի կամ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ
Цѣна 25 коп.

144 Արժրուճու գալերէա 144
ամենակէման պահեստ
մերէի և նայելիներէի.

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ
ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ
ВЪ НАЙМЫ
Въ галлерее имѣются: вода, газовое освѣщеніе и телеграфная станція.
6—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻՄ
ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԿԱԶԻՆՆԵՐ
Գալլերէում կայ ջուր, գազի լուսավորու-
թիւն և հեռագրական կայարան:
6—10

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 Ր., ԾՐՃՈՂՆԵՐ 1 Ր.,
Ճալփոլ աթոռներ 1 Ր. 50 Կ., ՓԱՑՑ-ԱՌՈՒ
4 Ր., ԲԱԶՎԱՌՈՒ-ՄԱՀԱՎԱԼ 10 Րուր և
աւելի, Թէյի բաժակներ 25 և 30 Կ., մի
աման քորոցներ 50 Կ., պատեղա ծխողների
համար 60 Կ. Փուճաք, անգլիական ՎԱՆՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՁ:
10,000 զոյգ գուլթաններ 25 Կ.—ից զոյգը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 Կ.—
1 Ր., 7,000 մատուցարաններ 5 Կ.—5 Ր.,
1,000 ՄԱՀԱՎԱԼՆԵՐ 5 Ր.—35 Ր., 400
արշին բոմպէյ. 1 Ր.—1 Ր. 30 Կ., պա-
րուսիա 40 Կ.—1 Ր., 300 հատ ըէփօղբեր
4 Ր.—35 Ր., 700 պրում ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000
ֆուճաք թէյ թէ՛սԱՄԱՆՈՎ 1 Ր. 65 Կ. և եր
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ մէջ:
21—100

ԿԱՐԻ և ՉԵԻԻ ԳԱՍԵՐ ամենանոր եղա-
նակով ԳՍԱԳՐՈՒԹԵԱՆ օգնութեամբ: Խեղճ
աղջկերանց համար առանձին պայմաններով:
Ընդունվում են կանանց և երեխաների հա-
մար ԿԱՐԵԻ: Ծախվում են կարերի նոր ձե-
ւեր թղթից շինված, պատրաստվում են
մեքենայով ծախեր: Կուկի, Նիկոլայիսկայա
փողոց, սուն ՁՅ 87:

ԿԱՀԱՒՈՐՎԱԾ ՍԵՆՆԵԱԿՆԵՐ
10 Ր. մինչև 30 Ր. ամիսը ծառայով և
սամօվարով: Տրվում են նոյնպէս օրով Ար-
տիւրիսկայա փողոցի վրա, գինուորական
գրիմապիայի հանդէպ Արուժիւնօղի տանը,
№ 8:
3—4 (5)

Հրատարակութեամբ Ներքինի Սիւնճոն-
անց լոյս տեսաւ գերանացի բժիշկ Շրէբերի
„Տնային բժշկական մարմնամարզութեան“
գրքով: Հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմատեսակ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի:
Նա յարմարացած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախ-
վում է „Կենտրոնական և Կովկասեան գրա-
վաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ.“ Тройцкій пер. типо-
графія Вартапянца, въ Тифлисъ.

ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ
ՓՐԻՓՈՐ ՎԱՐՁԵԼԵԱՆ
գինն է 70 կոպէկ
Ուսումնարանները և շատ օրինակ գնող-
ները 20% զիջում են ստանում:
Ցանկացողները կարող են դիմել կամ
ուղղակի հեղինակին „Тифлисъ, Григо-
рիо Соломоновичу Вардзелянъ, Ар-
мянская Семинарія, կամ կենտրոնական
գրավաճառանոց, ուր պահեստն է այդ գրքի:

Открыта полугодовая подписка
НА
ЕЖЕНЕДЕЛЬНЫЙ ЖУРНАЛЪ
„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“
(издаваемый въ г. Тифлисъ)
Съ 1 Іюля 1881 года по 1 Января
1882 года.
Цѣна за полъ года 6 руб.

Кромѣ того можно подписаться на
3 мѣс.—3 руб. 20 коп., на 1 мѣс.—
1 руб. 20 коп. Подписка принимается
съ 1 числа каждаго мѣсяца и не
далѣе конца года.
Разсрочка въ вѣзность денегъ допускается
*по соглашенію съ администраціею жур-
нала.*
Подписка принимается исключитель-
но въ администраціи журнала, въ г.
Тифлисъ, близъ Головинскаго пр.,
по Безыменному пер. въ домѣ Та-
мамшева.
Издатель А. С. Френкель.
Редакторъ А. В. Степановъ

„Խ Ե Ն Թ Ը“
ԱՐԿԱՄԵՐ ՎԵՐՁԻՆ ԹՈՒՍ-ԹՈՒՐԳԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՍՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՑՑԻԻ
Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղ-
կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է
„Մշակի“ խմբագրատանը, „Կենտրոնական
գրավաճառանոցում“, „Կովկասեան գրա-
վաճառանոցում“ պ. Զարարիա Գրիգորիան-
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզար-
ջեանցի, Հովուեանցի ծխարտոսի մարզպի-
ններում:
Գինն է 1 Րուր 20 կոպ:

ԱՅՍ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ ՍԿՋԲԻՑ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ՝

Որ առաջ գտնվում էր Արժրուճու գալլերէում, անցաւ Միւրի մանեանի
խանութիւնը, Գօրօվիսկի Պրօսպեկտի վրա, Սուգէրի Պալատի տակը № № 3, 4
(Երբէքն Չանջուղագիւնների խանութը):—Այս 1881 թուականից գրախանութին կից
բացվում են՝
Ա. Մի առանձին բաժին ուսումնարան, դիւանական, գրագիտական պիտոյքների,
ուր փաճառվում են՝ թղթի թանաքներ, մատիտներ, տետրակներ, քարտատախտակներ,
գրատախտակներ, փօստի ծրարներ, հայերէն և ֆրանսերէն մանրագրերով, կարկիւններ,
նկարչութեան վերաբերեալ պիտոյքներ և այլն և այլն...
Բ. Թիֆլիսում արդէն յայտնի „Մանկական դաստիարակութիւն“
(Дѣтское Воспитаніе) անունով պ. Աքիմեանի Ֆիլման ևս անցաւ կենտրոնական
Գրավաճառանոցի ձեռքը, ուր փաճառվում են ամենատեսակ մանկավարժական
խողայիքները ամենայն հասակի մանկանց համար:
Ը. Ընդունվում են պատուէրներ նաև արտաքին քաղաքների ուսումնարանական
փառչութիւններից ու մասնաւոր անձիքներից: Գները համեմատաբար չափաւոր են:
Դրամաւոր պատուէրները կատարվում են անյապազ:
Ա. Բաժանցի քաղաքների օրիորդական ուսումնարանների փառչութիւնների գործը
թիֆլիսեանցի համար կենտրոնական Գրավաճառանոցը յանձնառու կը լինի կատարել
և այնպիսի պատուէրներ, որոնք իրան գործունէութեան շրջանից զուրա են, այն
Չեռագործիին վերաբերեալ ամենատեսակ պիտոյքներ զնել և ուղարկել, բայց մի-
այն ուսումնարանների համար, որոնք իրանից են գրքեր և այլ ուսումնարանական իրեր
գնում: Այնպիսի պատուէրներն անկատար են մնում:
Կ. կենտրոնական Գրավաճառանոցում թիջի այլոց փաճառվում են հետեւեալ նոր
հրատարակութիւնները՝
Րաֆֆիի Խոնթըր 1 Ր. 20 Կ.
— **Դաւիթ Բէկ** 1 Ր. 50 Կ.
Յովհաննիսեան. Հայր և Հայաստանը օտարների աչքում . . . 2 Ր. 30 Կ.
Շահազիզեան. Հրապարակախօս ձայն 2 Ր. — Կ.
— **նոյն փառակազմ** 3 Ր. — Կ.
Ա. յազեան Գ. Սթթ. Պատմութիւն իսայիպ. ուսումնարանի . . . 2 Ր. 40 Կ.
Ա. Թանասեան. Էրեւանի նահանգի բուսականութիւնը 2 Ր. 50 Կ.
Բուսաբանութիւն համառօտ 2 Ր. 30 Կ.
Ա. Կիող պահանջներն անկատար են մնում:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատօլիկաց փողոցի անկիւնում ՄԻ-
ԲԱՆԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. Թիֆլիս, Михаилу
Н. Теръ-Никогосову.
37—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ՐԱՑՑԻԻ „ԽԵՆԹԸ“ անու-
նով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաթի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԿՈՒ
պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՁ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.
Հրատարակչի հասցէն. Մուսա, ՎԵ ԿՈՆՏՐՔ ԱՐԱՅԱՆՑԱ ԱԲԷԼՍ ԱՍ-
ՐԵՏԻՄՍԿԻ.

Յառաջիկայ ուսումնական տարուայ համար
Երևանայ հայոց թեմական դպրոցին հարկաւոր
են ուսուցիչները:—Հայոց, զաղայիւրէն լիզուճե-
րի, գծագրութեան, տոմարակալութեան, ուսու-
սաց վայելչագրութեան, ուսուսաց պատմութեան
և Ռուսաստանի աշխարհագրութեան համար. և
մի ուսուցիչ տղայոց ծխական դպրոցի: Ամեն
մի ուսուցիչ պարտաւոր է ունենալ շարքիա-
կան 24 դաս: Ցանկացողները թիջ լարեհաճեն
Խրեանց պայմանները և ուսման վիպականնե-
րը առաջարկել նոյն դպրանոցի վարչութեանը:
Անդամ հոգաբարձութեան՝
Վարդան Եղիազարեան

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆԻ տակ
բախվում ԳՈՐԾԱԿԱՏԱՐԱԿԱՆ ՊԱ-
ՀԵՍՏԻ մէջ ստացված են և ծախվում
են թէ մեծ քանակութեամբ և թէ առ-
ձեռն արտասահմանի **ԼԻԿԷՕՐՆԵՐ,**
ՐՕՄ ԵՒ ԿՕՆԵԱԿ: Շորիտերի և
Շաուրի ՕՂԻ, զանազան կոնսերվներ,
հիանալի իւր, սարգիւններ 28 Կ. արկղը,
Սալեանի ԽԱԻԵԱՐ ժեշտի տուփերի
մէջ, կաթէ Մօսկո ամենայաւ տեսակի, Օ-
դէսսայի **ՍԱՊՕՆ** լուսաքի համար, անգ-
լիական նըըըտայ և **ԼԵՂԱԿ** մեծ
քանակութեամբ: „Ժախօ“ գործարանի
ՎԱԿՍԱ: Պօպօլի և մեր Ֆիլմայի
թիջ: Եթէ մեր Ֆիլմայի թէյը գնողը
ՉԸ ՀԱԻԱՆԻ, որ հազիւ թէ կը պա-
տահի, կարող է վերագործել և **ՓՈՂ**
ՅՅՏ ստանալ:
2—2 (3)

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԲՐՕՇԻՐՆԵՐ
Ռուսերէն, հայերէն և վրացերէն
Ռուսերէն 30 տեսակից 30 հատը 1 ռ.
հայերէն 3 տեսակից 50 հատը 1 ռ. վրա-
ցերէն 7 տեսակից 50 հատը 1 ռ. մեր
հասցէն. Թիֆլիս, Ելիզաւետինսկայա յւ.
№ 71, Աւրաամ Ամիրխանյանց.
18—20 (2)